ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԷՋՄԻԱԾՆԻ V ԴԱՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ

Նելլի Ժամկոչյան

Սույն հոդվածը նվիրված է Էջմիածնի V դարի միանավ եկեղեցուն: Այս եկեղեցու վերաբերյալ ուսումնասիրությունները սակավ են: Այն մշտապես եղել է ուշադրության կենտրոնում, և ձեռնամուխ եղանք հակիրճ անդրադառնալու առեղծվածային այս եկեղեցուն:

Ըստ Մ. Օրմանյանի՝ Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե տաճարների ներքո մեծամեծ քարերով շինված գետնափորեր կան, որտեղ ամփոփված են կույսերի ոսկորները:

Հայաստան եկած կույսերի թիվը, ըստ Ագաթանգեղոսի, 70-ից ավելի էր, նահատակվածներինը՝ 37: Հանվանե հիշատակված են Հռիփսիմեն, Գայանեն և Մարիանեն: Գրիգոր Ա Լուսավորիչը Հռիփսիմյանց կույսերին դասել է սրբերի շարքը, Հռիփսիմեն և Գայանեն նշվում են ոչ միայն հայերեն, այլև հունարեն, լատիներեն, արաբերեն, ռուսերեն և ղպտերեն Հայսմավուրքներում:

Սուրբ Հռիփսիմյանք և սուրբ Գայանյանք 37 նահատակ կույսերի նույն խումբն է, սակայն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Տոնացույցով երկու տոն է նվիրված նրանց հիշատակին, որովհետև նահատակվել են երկու օրվա ընթացքում՝ միմյանցից անջատ երկու խմբով:

Ըստ պատմական տեղեկությունների՝ Հռոմի Դիոկղետիանոս կայսրը (284–305 թթ.) ցանկանում է մեկ անգամ ևս ամուսնանալ և մարդիկ է ուղարկում կայսրության բոլոր կողմերը՝ գտնելու և իր մոտ բերելու կանանցից գեղեցկագույնին: Խուզարկուները կայսրին են ներկայացնում մի քանի գեղանի կույսերի պատկերներ: Կայսրին առավել դուր է գալիս հրաշագեղ Հռիփսիմեն, ով շուրջ 300 կույսերի հետ աղոթական կյանքով ապրում էր Ս. Պողոսի վանքում[1]: Վանքի մայրապետն էր Գայանեն՝ Հռիփսիմեի դաստիարակը: Դիոկղետիանոս կայսրը, տեսնելով չքնաղ կույսի պատկերը, ցանկանում է կնության առնել Հռիփսիմեին: Իմանալով կայսեր այս մտադրության մասին՝ Գայանեն, Հռիփսիմեն և շուրջ 70

---

[1] **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց, Երևան, 1986, նաև՝ **Սարգիսյան Բ.**, Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, Վնտ., 1890, գլ. Զ, Սուրբերու կյանքը, Բեյրութ, 1994, **Գալուստյան Շ.**, Հայազգի սուրբեր, Երևան, 1997:

կույսեր ու քահանաներ, գիշերով թողնում են Ս. Պողոսի վանքը և հեռանում նախ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, այնուհետև՝ անցնում Երուսաղեմ, ուր մեկ ամիս մնալով՝ շարունակ աղոթում են Աստվածածնի գերեզմանին և նրա օգնությունը հայցում: Տիրամայրը տեսիլքով պատվիրում է նրանց գնալ Թադեոս առաքյալի վիճակ՝ Հայաստան[1]: Վաղարշապատում կույսերը բնակություն են հաստատում հնձանների շրջանում: Հնձաններն այն ժամանակ գտնվում էին քաղաքի դարպասներից մինչև այսօրվա Հռիփսիմե տաճարը: Քաղաքի գլխավոր «Արեգ» դարպասը գտնվում է այսօրվա Մաշտոցի պողոտայի և Սպանդարյան փողոցների խաչմերուկում:

Մատենագրական տեղեկություններից հայտնի է դառնում, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեության ընդունումից հետո բնակության համար ընտրել է հենց այն հնձանները, որտեղ բնակվում էին Հռիփսիմյան կույսերը, և հենց այնտեղից էլ նրան է երևացել տեսիլքը: Մեծ հավանականություն կա, որ 4-5-րդ դարերի այս բազիլիկ միանավ եկեղեցին, որը հայնաբերվել էր 1978-1979 թթ. պեղումների ընթացքում, հենց կույսերի բնակության վայրն էր[2]:

Դիոկղետիանոս կայսրն իր տերության բոլոր կողմերը սուրհանդակներ է ուղարկում՝ Հռիփսիմեին գտնելու և վերադարձնելու համար: Տեղեկանալով, որ կույսերը հեռացել են կայսրության սահմաններից՝ սուրհանդակները գալիս են նաև Հայաստան և հայոց թագավոր Տրդատ Գ-ին (298–330 թթ.) հանձնում կայսեր նամակը, որում վերջինս խնդրում է Տրդատից գտնել Հռիփսիմեին և հետ ուղարկել կամ էլ, եթե գեղանի կույսը Տրդատին հաճո երևա, կարող է ինքն ամուսնանալ նրա հետ: Տրդատի խուզարկուները Հռիփսիմեին գտնում են հնձաններում: Սկզբում Տրդատը ոսկեպատ գահավորակներ և սպասավորներ է ուղարկում նրան պալատ տանելու համար, սակայն, հանդիպելով Հռիփսիմեի ու մյուս կույսերի դիմադրությանը, սպասավորներն բռնությամբ են Հռիփսիմեին տանում թագավորական պալատ, արգելափակում սենյակներից մեկում: Հայոց թագավորը, գերվելով Հռիփսիմեի գեղեցկությամբ, ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Նա նախ զանազան խոստումներով ու ընծանե-

---

[1] Տե՛ս https://goo.gl/DHIS3I (Հնագետ՝ պ. գ. թ. **Արտակ Գնունին** ներկայացնում է պատմաքաղաքական այն իրադրությունը, որում հայտնվել էր Հայաստանը III դարի վերջում, ինչպես նաև Ս. Գրիգոր Լուսավորչի երկրային կյանքն ու գործունեությունը):

[2] Նույն տեղում:

րով ցանկանում է հրապուրել գեղանի կույսին, սակայն, մերժում ստանալով, փորձում է բռնությամբ տիրանալ նրան: Հռիփսիմեն համառորեն դիմադրում է մեծամեծ քաջագործություններով ու ահռելի ուժով հայտնի Տրդատ արքային: Վերջինիս հրամանով պալատ են բերում Գայանեին՝ հրամայելով նրան համոզել իր սանուհուն, որպեսզի ենթարկվի թագավորի կամքին: Գայանեն, ընդհակառակը, քաջալերում է Հռիփսիմեին՝ հաստատուն մնալ և չփոխել երկնային երջանկությունը երկրային ժամանակավոր փառքի ու վայելքի հետ: Այդ խոսքերի համար Գայանեին գանահարում և քարերով կոտրում են բերանը, որից հետո էլ իր երկու ընկերուհիների հետ բանտարկում: Հռիփսիմեն, շարունակելով պաշտպանվել թագավորից, վերջին մի մաքառումով հրելով Տրդատին, դուրս է պրծնում պալատից և ճեղքելով ամբոխը՝ հասնում հնձանների իրենց կացարանը: Տրդատը, շարականի խոսքերով «ամաչելով դեռատի կույսից պարտվելու համար» («ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր»), խիստ կատաղության մոլուցքով բռնված, դահիճներին ուղարկում է Հռիփսիմեի հետևից, ովքեր և նրան գտնում են քաղաքից հյուսիս մի բարձրադիր վայրում աղոթելիս: Այստեղ և դաժան ու անմարդկային չարչարանքներից ու կտտանքներից հետո նահատակվում է չքնաղ կույսը: Դահիճները սրատում են նաև Հռիփսիմեի մարմինը թաղել կամեցող 32 կույսերին, իսկ վերջում նրանց կացարանում սպանում են նաև Մարիանե անունով կույսին, ով հիվանդության պատճառով չէր կարողացել միանալ իր ընկերուհիներին[1]:

Կույսերի մարմինները թագավորի հրամանով մնում են անթաղ, սակայն ոչ մի գազան կամ գիշակեր թռչուն չի մոտենում նրանց, և նրանք չեն ապականվում: Ինն օր հետո վիրապից դուրս եկած Գրիգոր Լուսավորիչը ամփոփում է մարտիրոսուհիների մարմինները վկայարաններում. առաջինը՝ Հռիփսիմեի և 32 կույսերի նահատակության վայրում, երկրորդը՝ Գայանեի ու երկու կույսերի, և երրորդը՝ հնձանում՝ հիվանդ կույսի նահատակության վայրում: Իսկ Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսի օրոք (1691–1705 թթ.) նոր եկեղեցի է կառուցվում նաև Մարիանե կույսի նահատակության վայրում՝ ստանալով Շողակաթ անունը, քանի որ Լուսավորչի տեսիլքի համաձայն՝ երկնքից իջնող լույսն այստեղից էր տարածվել մյուս վկայարանների վրա ու պալատի դիմաց, ուր իջավ Քրիս-

---

[1] Նույն տեղում, նաև՝ **Սարգսյան Լ.**, Հռիփսիմյանց կույսեր, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 637-638:

տոսը: Համաձայն Ագաթանգեղոսի՝ Հռիփսիմյան և Գայանյան կույսերը նահատակվել են Գրիգոր Լուսավորչի՝ վիրապից դուրս գալու տարում՝ հոռի ամսվա 26-ին և 27-ին: Օրմանյան սրբազանի հաշվարկով այն համընկնում է 300 թ. նոյեմբերի 6-ին և 7-ին, սակայն «Հայսմավուրքները» որպես կույսերի նահատակման օրեր նշում են հոկտեմբերի 5-ը և 6-ը:

Վերոբերյալ հակիրճ պատմական ակնարկից հետո անդրադառնանք միանավ եկեղեցիներին և դրանց թվում՝ նաև Էջմիածնի V դարի միանավ եկեղեցուն:

Հայաստանի IV-VI դդ. պաշտամունքային ճարտարապետության միանավ եկեղեցիների տիպը գերակշռողն էր. մեզ են հասել այդ ժամանակաշրջանի՝ հիսունից ավելի այդպիսի եկեղեցիներ:

Միանավ եկեղեցիները համարվում են եթե ոչ ամենահին, ապա քրիստոնեական պաշտամունքային շենքի հնագույն տիպերից: Բացի այդ՝ այս հորինվածքը, շնորհիվ իր համեմատաբար պարզությանը և զանգվածային կառուցման համար մատչելիությանը, մեծ տարածում գտավ և դարձավ «ամենակենսունակը» եկեղեցական ճարտարապետության մեջ: Հայաստանում այն կիրառվել է IV դ. սկզբից մինչև մեր օրերը:

Միանավ եկեղեցու հիմնական հորինվածքը բաղկացած է արևմուտքից արևելք ձգված ուղղանկյուն դահլիճից և դրան արևելյան կողմից անմիջականորեն միացած աբսիդից (այն լինում է կամ պատերի ուղղանկյուն եզրագծի մեջ ներառված, կամ դեպի դուրս շեշտված): Հաճախ այդ հորինվածքը բարդանում է հիմնական միջուկի գործառական կերպով կապված լրացուցիչ շինություններով (ավանդատներ, սրահներ): Այս բաղկացուցիչ տարրերով էլ ստեղծվում են միանավ եկեղեցիների փոքրաքանակ տարբերակները, որոնք հանդիպում են նաև մի շատ երկրների վաղքրիստոնեական ճարտարապետության մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ հայկական միանավ հուշարձանները, ի տարբերություն սիրիականի, բացառապես երկայնական տիպի եկեղեցիներ են (ներառյալ սրահները), իսկ եկեղեցու տարածության կազմակերպումն ընդլայնական առանցքով Հայաստանի համար հատկանշական չէ: Սրանով նույնպես արտահայտվում են տվյալ ճարտարապետական տիպի տեղական արմատները, և լիովին հիմնավորված է այն կարծիքը, որ Հայաստանի միանավ թաղածածկ եկեղեցիները մեզ հասած տեղական ավանդույթների արտահայտություններն են (Յ. Ստրժիգովսկի):

Հուշարձանի մնացորդները գտնվում են էջմիածին քաղաքի կենտրոնում՝ մշակույթի տան մերձակա զբոսայգու տարածքում:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1979-1980 թթ. հետախուզական բնույթի պեղումներ է իրականացրել զբոսայգու տարածքում[1]:

Փավստոս Բուզանդի տեղեկություններով՝ Էջմիածնի IV դ. սկզբին կառուցված վկայարաններն ավերվել են 369 թ. Հայաստան ներխուժած պարսկական զորքերի կողմից և վերականգնվել IV դ. վերջում՝ Սահակ Պարթևի կողմից:

Մուրադ Հասրաթյանն իր «Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը» գրքում հավանաբար Սահակ Պարթևի պատվին է եկեղեցին անվանում Սահակաշեն եկեղեցի:

Հուշարձանը մեզ է հասել ավերակ վիճակում: Պեղումներով բացվել են, գետներես շուրջ մեկ մետր բարձրությամբ պահպանված երբեմնի շքեղ բազիլիկ կառույցի մնացորդները՝ շարված կարմրերանգ տուֆի սըրբատաշ քարերով և կրաշաղախով: Եկեղեցին հաստատվել է եռաստիճան, լայնանիստ հիմնապատվանդանի՝ ստիլոբատի վրա: Այն իրենից ներկայացնում է ուղղանկյուն ծավալի մեջ ներգծված խորանով սրահի տիպը (չափերը՝ 8,5 X 5,5 մետր): Կառույցն ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Ավելի ուշ՝ ակներևաբար VII դարում, եկեղեցու հարավարևելյան անկյունում, արտաքուստ, կառուցվել է խորան, որի աննշան մասն է պահպանվել: Հուշարձանի ճարտարապետական հորինվածքը և գեղարվեստական հարդարանքը (մույթերի, որմնասյան խարիսխների, քիվերի քանդակները) հիմք են տալիս հանգելու այն հետևության, որ Էջմիածնի նորահայտ բազիլիկ կառույցը վերաբերում է V դարին: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են կառույցի շինարարական խեցեղենի բազմաթիվ նմուշներ, որոնց մեջ աչքի են զարնում, մասնավորապես Կենաց ծառի վերադիր և խորադիր, ինչպես նաև հավասարաթև խաչի վերադիր պատկերներով զարդարված կղմինդրների ճակտոնները:

---

[1] Հուշարձանի պեղումների արդյունքների մասին տե՛ս **Կարախանյան Գ. Հ.**, **Մելքոնյան Հ. Ա.**, Էջմիածնի միջնադարյան հուշարձանի պեղումների նախնական արդյունքները ՀՍՍՀ-ում 1983-84 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան, 1985, էջ 42: **Կարախանյան Գ. Հ., Սարգսյան Գ. Գ., Մելքոնյան Հ. Ա., Հարությունյան Պ.Պ.**, Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ, Բանբեր Երևանի համալսարանի, 1992, էջ 158-163:

Եկեղեցու հատակի տակ կատարված պեղումներով բացվել են փոքր չափի գլաքարերով շարված և կրաշաղախով երեսապատված վաղմիջնադարյան հնձանի մնացորդներ: Հնձանի հյուսիս-հարավ առանցքով պահպանված պատի երկարությունը 180 սմ է: Եկեղեցու հատակի տակ հնձանի հայտնաբերումը հետաքրքիր է այն առումով, որ առարկայորեն ավելի քան հավաստի է դարձնում Ագաթանգեղոսի վկայությունը, Տրդատ թագավորի հրամանով սպանված Հռիփսիմյան կույսերի նահատակության վայրերում խաչեր կանգնեցնելու, իսկ ավելի ուշ եկեղեցիներ կառուցելու մասին[1]: Պատմիչը տեղեկացնում է նաև, որ կույսերն ապաստարան էին գտել քաղաքի մերձակայքում ուր կային խաղողի այգիներ և հնձաններ: Համաձայն նույն տեղեկության՝ կույսերի նահատակության վայրերում հետագայում կառուցվում են վկայարան-եկեղեցիներ, որոնցից մեկն ակներևաբար նորաբաց բազիլիկ կառույցն է: Նորաբաց հնձանի հյուսիսարևելյան հատվածում՝ եկեղեցու հյուսիսային որմի տակ, արտաքուստ հայտնաբերվել են V-VI դարերի կավանոթները հիշեցնող, ուռուցիկ իրանով, վերադիր նիստեր ունեցող գոտիներով հարդարված վեց ամբողջական կարասներ: Դրված են իրար շատ մոտ, երկու շարքով, յուրաքանչյուրում՝ երեքական: Բոլոր կարասները ծածկված են տուֆե, կիսաբոլոր վերնամասով, ողորկ կափարիչներով: Կարասների լայն շուրթերին թաց վիճակում բրուտը երկաթագրով փորագրել է ԽԵ, ԽՈ, ԽՈՒ տառերի խմբերը, որոնք ամենայն հավանականությամբ մատնանշում են անոթների տարողությունը: Կավանոթի վրա տարողությունը մատնանշելու ավանդույթը խոր արմատներ ունի: Հայտնի է Վանի թագավորության ժամանակներից, մի տարբերությամբ միայն, որ ուրարտացիները թվերը գրում էին անոթների իրանի ուռուցիկ մասում:

Պեղումների ժամանակ եկեղեցու շուրջը բացվեցին մեծ չափերի, երկթեք սրբատաշ տուֆի քարերից կերտված կափարիչներով, ողորկ մեծ սալերով քարարկղային դամբարաններ, տուֆ քարից սարկոֆագներ, որոնք հայտնի են Հռիփսիմեի, Աղցքի, Արուճի, Զովունիի, Ջրվեժի և մի շարք այլ միջնադարյան հնավայրերից:

Ուշագրավ է եկեղեցու հարավարևելյան անկյան մոտ հայտնաբերված երկթեք տապանաքարը: Այն ունի 184 սմ երկարություն: Նիստերի

---

[1] Տե՛ս **Կարախանյան Գ. Հ.**, **Մելքոնյան Հ. Ա.**, Էջմիածնի միջնադարյան հուշարձանի պեղումների նախնական արդյունքները ՀՍՍՀ-ում 1983-84 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան, 1985, էջ 42:

լայնությունը՝ 36, բարձրությունը՝ 15 սմ է: Տապանաքարի երկու լանջերին երկուական տողերով, Մեսրոպյան երկաթագրով փորագրված է հետևյալ հիշատակագիրը՝

ԱՅՍ ՏԱՊԱՆ ԽԵՉԱՆԱ ԱՌՈՀԻՊԱՏ ՊԱՏՐԿԻ Է,
-ԿՈՆ -ՂԱՅԻԻ ԱՌՈՒԵՂԵՆԻՑ ՏՆ ՈՐԴՈՅ[1]:

Արձանագրության մեջ հիշատակված է Առավեղյան տոհմը, որի ծագումը, ըստ պատմահոր, կապվում է Արտաշես առաջինի անվան հետ: Համաձայն Մովսես Խորենացու՝ Առավեղյանները, որպես Սաթենիկի մերձավորներ, գալիս են Հայաստան՝ դասվելով հայ նախարարների շարքը: Ավելի ուշ այս տոհմը հիշատակվում է մի քանի անգամ: Հատկապես ակտիվ մասնակցություն է ունեցել Վարդանանց պատերազմներին: Նորահայտ տապանագրում վկայված Խեչան Առավեղյանը ևս պատմական անձնավորություն է: Նրա մասին հիշատակում է Սեբեոսը՝ արաբների՝ Հայաստան կատարած արշավանքի առնչությամբ: Ըստ այդ վկայության՝ Խաչյան Առավեղյանը մեկն էր այն երեք իշխաններից, որոնք Այրարատ ներխուժած թշնամու մասին բոթը հասցրին Դվին: Հայ անվանի նախարարի՝ Վաղարշապատում թաղված լինելը թերևս գալիս է հաստատելու անվանի պատմաբան Ն. Ադոնցի այն տեսակետը, որ Առավեղյանները ապրում էին Այրարատ նահանգում՝ արքունի ոստանում:



Եկեղեցու հատակագիծը (ճարտարապետ Ա. Տեր-Մինասյան)

[1] Տե՛ս նույն տեղում:

МИН... ...О КУЛ... ...СР

индекс

ПАМЯТНИКИ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ СССР

(недвижимые)

16. Հեղինակ 1

СОЮЗНАЯ РЕСПУБЛИКА ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ

(наименование республиканского органа охраны памятников)

ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ПАСПОРТ

I. НАИМЕНОВАНИЕ ПАМЯТНИКА ՇՈՂԱԿԱԹԻ ՄԻԱՆՈՒ ԵԿԵՂԵՑԻ

II. ТИПОЛОГИЧЕСКАЯ ПРИНАДЛЕЖНОСТЬ

памятник истории	памятник культуры	памятник архитектуры	памятник монумент. иск-ва
		4	

III. ДАТИРОВКА ПАМЯТНИКА (или дата исторического события, с которым связано возникновение памятника — для памятников истории)

4-ՐԴ դ. վերջ-5-ՐԴ դ. սկիզբ

IV. АДРЕС (местонахождение) ПАМЯТНИКА Քաջարանի

(АССР, край, область, район, автономная обл.,

национальный округ, населенный пункт (почтовый адрес))

V. ХАРАКТЕР СОВРЕМЕННОГО ИСПОЛЬЗОВАНИЯ

по назначению	объект туризма	туристско-экскурсион.	культурно-просветит. цели	жилые помещения	учреждения, предприятия	не используется
	муз., биб., клуб	+	больн., санат., д/отд.		учрежден. торгов. промышл. склад	

ПРИЛОЖЕНИЯ:

Фото общего вида —

Фото фрагментов

Генплан —

Обмер: план +

фасад

разрез —

Схематический план охранной зоны —




ԵՎՄԻԱԾԻՆ ՄՈՒՏՔԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՐԱԿԱՐԾ ԵԿ. ՄՊՏ
ՀԱՏԱԿԱԳԻԾ 1:50

ԷՋՄԻԱԾՆԻ V ԴԱՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋ

Նելլի Ժամկոչյան

Բանալի բառեր *- միանավ, եկեղեցի, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Գրիգոր Լուսավորիչ, պեղումներ, ճարտարապետություն, հուշարձան, արձանագրություն*

Սույն հոդվածը ներկայացնում է Էջմիածնի V դարի միանավ եկեղեցին: Այստեղ քննվում են եկեղեցու վերաբերյալ ուսումնասիրությունները: Հայաստանի IV-VI դդ. պաշտամունքային ճարտարապետության միանավ եկեղեցիների տիպը գերակշռողն էր. մեզ են հասել այդ ժամանակաշրջանի՝ հիսունից ավելի այդպիսի եկեղեցիներ:

Հուշարձանի մնացորդները գտնվում են էջմիածին քաղաքի կենտրոնում՝ մշակույթի տան մերձակա զբոսայգու տարածքում: Հուշարձանը մեզ է հասել ավերակ վիճակում:

Հուշարձանի ճարտարապետական հորինվածքը և գեղարվեստական հարդարանքը հիմք են տալիս հանգելու այն հետևության, որ Էջմիածնի նորահայտ բազիլիկ կառույցը վերաբերում է V դարին:

ОБ ОДНОНЕФНОМ ЦЕРКВЕ В ЭЧМИАДЗИНЕ (V ВЕК)

Нелли Жамкочян

Ключевые слова *- Однонефный, церковь, Св. Рипсиме, Св. Гаяне, Св. Просветитель, раскопки, архитектура, памятник, протокол*

В статье представлена однонефная церковь в Эчмиадзине V века. Здесь рассмотрены исследования о церкви. Этот интересный тип памятников армянской архитектуры долгие времена не являлся предметом исследования.

Остатки памятника находятся в центре города Эчмиадзина, в парковой зоне рядом с домом культуры. Она дошла до нас в руинах.

Архитектурный дизайн и оформление памятника дают сделать вывод о том, что новая структура относится к V века.

REGARDING THE SINGLE-NAVE CHURCH IN EJMIATSIN (V CENTURY)

Nelli Zhamkochyan

Keywords: *Single-nave, church, St. Hripsime, St. Gayane, St. Gregory the Illuminator, excavations, architecture, monument, record*

This article is about the single-nave church in Ejmiatsin in V century. Here we discuss the studies about this church. This interesting type of monuments of Armenian architecture was not a subject of study for a long time.

The remains of the monument situate in the center of Ejmiatsin, in the park area, near the House of Culture. We found it in the ruins.

From the architectural design and decoration we give conclude that the new structure refers to the V century.